

**ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԲԱՌԱՎՉՆՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ
ԼԵՉՈՒԻ» ԶԵՌԱԳԻՐ ԵՐԿԸ՝ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ**

*Բանալի բառեր՝ Մխիթարյան միաբանություն, Բազմավէպ, ձեռագիր, բառա-
րան, աշխարհաբար, գրաբար:*

Մեր նպատակը Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Բառագննություն աշխարհիկ լեզուի» ձեռագիր երկի քննումն է՝ ոչ միայն աշխարհաբարի տա-
րածման գործում Գ. Այվազյանի դերը ներկայացնելու նպատակով, այլև նրա
այդ գործի դիտարկումը որպես աշխարհաբար հայերենի ևս մեկ նմուշ-բառա-
րանի: Հեղինակն իր նախապես հրատարակած հոդվածներում տեսական
դրույթներով հիմնավորած լինելով աշխարհաբարի զարգացման ուղին, այս-
տեղ արդեն փորձում է շրջանառության մեջ դնել իր ժամանակի աշխարհաբա-
րը որպես գրական լեզու: Նրա նպատակը միայն ժամանակի աշխարհաբարն
արձանագրելը չէր, նաև ցանկանում էր որոշ հեղինակների հրամցնել հայերենի
բառապաշարի որոշակի ուղեցույց, որից նրանք պետք է օգտվեին իրենց նյութն
ընթերցողների լայն հասարակությանը հասանելի դարձնելու նպատակով:

Գ. Այվազյանը նշանավոր եկեղեցական և հասարակական գործիչ էր,
բանասեր, պատմաբան, լեզվաբան, մանկավարժ, թարգմանիչ: Նրա կյանքի
մեծ մասն անցել է Մխիթարյան միաբանությունում: Կարևոր է նրա դերը ոչ
միայն միաբանական կյանքի, այլև Մխիթարյանների ծավալած հայանպաստ
գործունեության, իսկ ավելի ուշ, արդեն «Բազմավէպ»-ը հիմնադրելու և
խմբագրելու շնորհիվ նաև ժամանակի լեզվի զարգացման ուղիները մատնան-
շելու մեջ: «Բազմավէպ»-ը իր հիմնադիր-խմբագրի շնորհիվ պատմական,
աստվածաբանական, թարգմանական կարևոր հարցերի քննությունից բացի,
մեր լեզվի համար բախտորոշ դեր խաղաց գրաբար-աշխարհաբար հակամար-
տության հորձանուտում: Չնայած Գ. Այվազյանն իր պատմական գործերը գրել
է գրաբարով, սակայն, հաշվի առնելով ժԹ՝ դարի կեսերին ձևավորվող աշ-
խարհաբարի կարևորությունը ժողովրդի ստվար զանգվածին հասանելի լինե-

լու համար՝ նաև անվարան դիմել է աշխարհաբարին: Գ. Այվազյանը չափազանց մեծ տեղ էր հատկացնում ազգային լեզվին, ուստի մանկավարժական գործունեությունը և հայերենին նվիրված աշխատություններով իր նպաստը բերեց Ս. Ղազարում մանուկների հայեցի դաստիարակությանը և հետաքրքիր դիտարկումներ, յուրօրինակ մտտեցումներ առաջարկեց հայերենի ուսումնասիրության ու նրա առանձնահատկությունների պարզաբանման առիթով:

Լեզվին նվիրված և աշխարհաբարով շարադրված նրա բազմաթիվ աշխատությունները¹ մեծ դեր և նշանակություն ունեցան ժամանակի լեզվամտածողության և գրաբար-աշխարհաբար հակամարտության բարդ ու դժվարին փուլում. բարդ, քանի որ ինքը՝ հեղինակը սկզբնական շրջանում իր աշխատությունները գրել է գրաբարով: Ավելի ուշ, հաշվի առնելով աշխարհաբարի կարևորությունը և «Բազմավէպ»-ի նյութերը ժողովրդին հասանելի դարձնելու խնդիրը, ինչպես նաև, որպես մանկավարժ, գերխնդիր համարելով մանուկներին ավելի հասկանալի լեզվով նյութերի մատուցումը՝ նա սկսեց իր աշխատությունների մեծ մասը գրել աշխարհաբարով, զուգահեռ բազմաթիվ ուշագրավ դիտարկումներ արեց լեզվի զարգացման ուղիների մասին: Գ. Այվազյանը լեզվին վերաբերող իր մի քանի հոդվածներում² նշում է ազգային լեզվի զարգացման հիմնական ուղիները և նկատառումներ հայտնում վերջինիս տարածման մասին՝ իրեն ժամանակակից հեղինակներին հորդորելով նախապատվությունը տալ ժողովրդին հասկանալի լեզվին՝ աշխարհաբարին:

¹ Տե՛ս Գ. Այվազյան, *Խանգարմունք հայկաբանության ի հնումն եւ ի նորումս, Թէոդոսիա, 1869, Առակք Յովհաննու Քոիլովի չինն գիրս, Թարգմանեաց յաշխարհիկ բարբառ Գաբրիէլ արեւայիսկոպոս Այվազեան, Վաղարշապատ (երկրորդ տպագրություն), 1896, նույնի՝ Խրիմու հայոց լեզուովը շարադրուած առակներ, Ս. Պետերբուրգ, 1872, նույնի՝ Սրբագրութիւն սխալմանց տետրակացն լսարանի, Ս. Էջմիածին, 1865, նույնի՝ Ուղղագրութիւն լեզուիս Հայոց, Թէոդոսիա, 1869, նույնի՝ Տեսութիւն կարճեաց տետուն հայր Արսենի Բագրատունւոյ յաղագս հնչման Ղ եւ Լ տառից, Վենետիկ, 1852, նույնի՝ Նախակրթանք հայերէն լեզուի, 3 հատորով, 1860-1877 թթ. (Մասն Ա՝ Թէոդոսիա, 1860, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1875, Մասն Բ՝ Վաղարշապատ, 1876, Մասն Գ՝ Վաղարշապատ, 1877), Գ. Այվազեան, *Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին*. այս աշխատությունը մեզ չհաջողվեց գտնել Գ. Այվազյանի տպված գործերի շարքում: ՄՄ 2878 ձեռագրի առաջաբանում հեղինակը նշում է, որ վերջինս տետրակ է (5բ) և հնարավոր է՝ ինչ-որ մի տեղ այն պահվում է ձեռագիր վիճակում, երկրորդ՝ ավելի քիչ հավանական տարբերակն էլ այն է, որ Գ. Այվազյանը «Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին» տետրակ ասելով նկատի ունի վերը նշված «Ուղղագրութիւն լեզուիս Հայոց»՝ կրկին 1869 թվականին Թէոդոսիայում (ՄՄ 2878 ձեռագրի գրչության ժամանակն ու տեղն է) տպված իր գործը:*

² Գ. Այվազեան, «Ազգային լեզուն պահելու վրայ», *Բազմավէպ*, հ. Ա, 1843, էջ 76-80, «Աշխարհաբար լեզուի վրայ», *Բազմավէպ*, հ. Ա, 1843, էջ 108-111:

Հենց լեզվին նվիրված մի քանի աշխատություններում Գ. Այվազյանը հորդորեց գրել աշխարհաբարով և նշեց այն հիմնական ուղիները, որոնք պետք է աղբյուր և հենք դառնային աշխարհաբարի՝ որպես գրական լեզվի վերջնական ձևավորման և տարածման համար: Այդպիսի աշխատություններից է մեր քննության նյութը՝ միայն ձեռագրով պահպանված «Բառազննութիւն աշխարհիկ լեզուի» (ՄՄ 2878 ձեռ.) գործը, որը ժամանակի աշխարհաբարը գիտական շրջանառության մեջ դնելու յուրօրինակ փորձ էր: Ավելին, բարեխիղճ լեզվաբանի նուրբ հոտառությամբ հեղինակը կարողացավ ոչ միայն սոսկ արձանագրել ժամանակի բառապաշարը, այլև բազմաթիվ հետաքրքիր բացատրություններով և այլ լեզուների հետ հաճախակի զուգադրումներով առավել համակողմանի ուսումնասիրել ժամանակի աշխարհաբարը՝ սեղանին դնելով հանրամատչելի լեզվով բացատրություններով մի գործ:

ՄՄ 2878 ձեռագրի մեր ուսումնասիրության նպատակն է արձանագրել Գ. Այվազյանի լեզվական հետաքրքիր դիտարկումներն ու բնորոշումները և դիտարկել աշխարհաբարին նախապատվություն տալու փաստարկները, ինչպես նաև ուսումնասիրել ԺԹ. դարի կեսերի աշխարհաբարի ևս մեկ նմուշ, ինչը թույլ կտա հստակեցնել տվյալ ժամանակաշրջանի հայերենի բառապաշարը:

Աշխարհաբարին վերաբերող աշխատությունները արևմտահայ իրականության մեջ սկսվում են ԺԸ. դարի սկզբից: 1717 թվականին Վենետիկում լույս տեսած Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց»³ գիրքը համարվում է աշխարհաբարի առաջին քերականությունը, 1866 թվականին Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի»⁴ աշխատությունը գիտական մակարդակի է հասցնում աշխարհաբարի ուսումնասիրությունը. նրանում անդրադարձ կա գրաբար-աշխարհաբար հակամարտությանը, և նախապատվությունը տրված է աշխարհաբարին և, էդ. Աղայանի բնորոշմամբ՝ հայերենագիտությունը բարձրացված է «եվրոպական առաջավոր լեզվաբանության մակարդակին»⁵: Աշխարհաբարի քերականությանը և բառապաշարին նվիրված կարևոր աշխատություններ են Գ. Մուրադյանի «Հայերէն քերականութիւն նորավարժ

³ Մխ. Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց, Վենետիկ, 1727:

⁴ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

⁵ 1987 թ.ին վերահրատարակված վերոնշյալ աշխատության առաջաբան, տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 3:

ուսանողաց համար»⁶, Վ. Չալըխյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի»⁷, Ա. Գարագաշյանի «Գարուցութիւն կամ նոր քերականութիւն հայերէն»⁸, Զ. Տոնելյանի «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի»⁹, Ն. Մելիք-Թանգյանի «Աշխարհաբարի քերականութիւնը»¹⁰ և այլն:

Դրանց զուգահեռ՝ ԺԹ. դարում այլալեզու բազմաթիվ բառարանների կողքին հրատարակվում էին գրաբարի և աշխարհաբարի բառարաններ: Գլուխգործոցներից էր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»¹¹ բառարանը, որ առավել հայտնի է «Նոր Հայկազյան բառարան» համառոտումով: Նշենք այլ բառարաններ՝ «Համառոտ բառարան ի պէտս նորավարժից»¹², «Բառգիրք հայկազեան լեզուի»¹³, «Առձեռն»¹⁴, «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց»¹⁵ և այլն:

Աշխարհաբարին նվիրված ահա այդպիսի բառարան է Գ. Այվազյանի «Բառազնութիւն աշխարհիկ լեզուի» աշխատութիւնը, որը, ի տարբերութիւն վերը նշվածների՝ աշխարհաբարով աշխարհաբարը ժողովրդին հասցնելու նպատակ ունէր: Ժամանակի բառարանների հիմնական խնդիրն էր գրաբարով

⁶ Գ. Մուրատեան, Հայերէն քերականութիւն նորավարժ ուսանողաց համար, Տփլիս, 1860:

⁷ Վ. Չալըխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիէննա, 1862:

⁸ Ա. Գարագաշեան, Գարուցութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Կ. Պոլիս, 1865:

⁹ Զ. Տօնէլեան, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1897 (գրական կեղծանունը՝ Սիպիլ, վերոնշյալ աշխատությունը բազմիցս հրատարակվել է նաև վերջինիս ամուսնու՝ Հրանտ Ասատուրի աշխատակցությամբ):

¹⁰ Ն. Մելիք-Թանգեան, Աշխարհաբարի քերականութիւնը, Նոր Զուղա, 1900:

¹¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց՝ Բ. Գաբրիել Աւետի-
ֆեան, Բ. Խաչատուր Սիւմէլեան, Բ. Մկրտիչ Աւգերեան, Բ. 1, Ա-Կ, Վենետիկ, 1836 և Բ. 2,
Հ-Ֆ, Վենետիկ, 1937:

¹² Համառոտ բառարան ի պէտս նորավարժից, Վենետիկ, 1859: Վերջինս գրաբար-աշխարհա-
բար բառարան է՝ միտված հասկանալի դարձնելու գրաբարով գրականությունը արդեն
խել ժողովրդի մեջ լայն կիրառություն ստացած աշխարհիկ լեզվի՝ աշխարհաբարի օգնու-
թեամբ:

¹³ Գ. Փէշարմալեան, Բառգիրք հայկազեան լեզուի, Բ. 1, Ա-Կ, Կոստանդնուպոլիս, 1844 և Բ.
2, Հ-Ֆ, Կոստանդնուպոլիս, 1846: Հայտնի է, որ այս աշխատությունը հեղինակը գրել
է 1826 թվականից առաջ, սակայն չի ավարտել, այն լրացրել են նրա աշակերտները:

¹⁴ Տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Բ. Մկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1846: Պետք է
նշել, որ, աշակերտելով Մ. Ավգերյանին՝ Գ. Այվազյանը նույնպես ամուսան չի մնացել այս
և «Հայկազեան» բառարանների կազմման աշխատանքներում: Բառարանը 1865 թ.-ին
Վենետիկում վերահրատարակվել է Գրիգոր ձեյալյանի կողմից՝ 5000 բառաճորվածի հա-
վելմամբ, տե՛ս և հմմտ.՝ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Գ. ձեյալեան, Վենետիկ,
1865:

¹⁵ Եղ. Հիւրմիզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք
նախնեաց ի պէտս դպրոցաց, Վենետիկ, 1869:

ավանդված հին մատենագրությունը հասանելի դարձնել ժողովրդին, որի խոսակցական լեզուն չհղկված աշխարհաբարն էր, ըստ այդմ էլ, բառահոգվածները հիմնականում կազմվում էին **գրաբար-աշխարհաբար հաջորդականությամբ**: Սույն ձեռագրում աշխարհաբարը, որը պետք է հղկվեր և դառնար գրական լեզու, բացատրվում է հենց նույն աշխարհիկ լեզվով՝ **աշխարհաբար-աշխարհիկ լեզու կաղապարով**: Գ. Այվազյանի խնդիրն էր հեղինակներին ուղղորդել ընտրելու այն բառապաշարը, որն օգտագործելով՝ նրանք կարող էին և՛ հասկանալի լինել ժողովրդին, և՛ չշեղվել հայերենի զարգացման ճիշտ ուղուց:

Գ. Այվազյանի «Բառագննութիւն աշխարհիկ լեզուի» ՄՄ 2878 ձեռագիրը 79 թերթաքանակով և 33×22 մեծությամբ գործ է (շղագիր)¹⁶ գրված 1869 թ., Թեոդոսիայում, Սարգիս էլիկյուզեյանի¹⁷ հորգորով: Զեռագրի ընդարձակ առաջաբանում Գ. Այվազյանը մանրամասն նշում է բոլոր խնդիրներն ու իր մտահոգությունները՝ կապված հայերենի հետագա զարգացման, գրաբար-աշխարհաբար հակամարտության հետ, նաև թվարկում է դժվարությունները, որոնք անխուսափելի կլինեն, եթե նախապատվությունը տրվի աշխարհաբարին՝ որպես հայերենի զարգացման հիմնական ուղու: Այսպես, աշխարհաբարն աստիճանաբար դառնալով ուսումնասեր հասարակության մեծ մասի համար միանգամայն ընդունելի և մշակման ենթակա լեզու, այնուամենայնիվ, ուներ որոշակի թույլ կողմեր: Զուգահեռ ներկայացվում է նաև մյուս հատվածի մտահոգությունը. «...ոմանք կասկածոտ աչքով սկսան վախնալ, որ մի գուցէ սորա մշակութիւնը վնաս բերէ մեր հին նախնեաց պատուական լեզուին, այսինքն՝ գրաբառին, և կամաց կամաց այս դուստրը, այն վսեմ և գեղեցիկ մօրը կենդանութեան ժամանակին՝ նորա տեղը բռնէ»¹⁸: Անցած մի քանի տասնամյակը ցույց է տալիս աշխարհաբարի առավելու-

¹⁶ Զեռագրի ընդարձակ նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Թ., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2017, էջ 1063-1068: Մենք փորձեցինք պարզել նաև ձեռագրի անցած ուղին, սակայն ունենք կցկտոր տեղեկություններ. հայտնի է միայն, որ վերջինս Մատենադարան է տեղափոխվել էջմիածնի ձեռագրերի Գևորգյան հավաքածուի կազմում, իսկ ինչ վերաբերում է վերոնշյալ հավաքածուի գոյացման աղբյուրներին, մենք այն գտանք «Նախկին պատկանելությունը անորոշ» ձեռագրերի (թվով 448) շարքում. տե՛ս *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 71:

¹⁷ Այդ անձի (Սարգիս էլիկյուզեյան) մասին շատ տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել. «Մատենաց աղանի» հանդեսի (որ կրկին Գ. Այվազյանի հիմնադրածն էր) 1861 թվականի Թ., ԺԱ., ԺԳ. և ԻԳ. համարներում նա հիշատակվում է բաժանորդների ցուցակում (Կոստանդնուպոլսեցիների շարքում) և, հնարավոր է, եղել է ձեռագրի մեկեմասը:

¹⁸ ՄՄ 2878, էջ 2ա, այսուհետ ձեռագրի էջերը կհղենք շարադրամբի մեջ, փակագծված:

թյունը՝ ժողովրդին և ուսումնասեր մանուկներին հասանելի լինելու գործում, և նույնիսկ վերոնշյալ մտավարկության հայտնողները խոստովանեցին, որ «աշխարհաբառին ծաղկելուն օգուտները անհամեմատ առաելութեամբ մեծ են՝ քան թէ անկից յառաջացած կամ յառաջանալու վնասները» (Չա): Թողնելով այս իրարամերժ կարծիքները «հին հայկաբանութեան ջատագով բանասիրաց» և «ազգային կրթութեան աշխատող և ցանկացող նոր գրագիտաց» դատին՝ Գ. Այվազյանը նշում է. «ամէն մարդ ալ աղէկ հասկըցած է այժմ, որ յիրաւի տղայոց բան սովրեցընելու և ռամիկ ժողովրդոց մէջ կրօնական եւ արտաքին տեղեկութիւններ տարածելու համար անպատճառ հարկաւոր էր սովորական՝ ողջ և դիւրիմաց լեզուով մը խօսիլ նոցա հետ, և ոչ այնպիսի լեզուով, որ գործածութենէ դուրս մնացած է ամէն տեղ, և իրաւամբ ասուեր է գրոց լեզու, գրոց բարբառ, գրաբառ, գրաւոր լեզու, նման Յունաց հելլենական լեզուին, Հռովմայեցի ազգաց լատիներենին, Ռուսաց սլաւեան կամ եկեղեցական լեզուին, և այլն» (Չա, ընդգծումները այստեղ և այլուր հեղինակինն են):

Այնուամենայնիվ, աշխարհաբարին նախապատվութիւն տալու հարցը, ըստ Գ. Այվազյանի, դեռևս խնդրի վերջնական լուծում չէ, քանի որ առաջ են գալիս որոշ խոչընդոտներ: Մեկն այն է, որ աշխարհաբարը գրաբարի նման միատեսակ չէ. գրեթե ամեն երկիր, կամ գոնե «Հայաստանի ամէն մէկ նահանգը» իր բնորոշ բարբառն ունի, որոնք շատ հաճախ անընկալելի են նույնիսկ միմյանց համար: Գ. Այվազյանը մտահոգութիւն է հայտնում, թե առկա երեսունից ավելի բարբառներից որի՞ն է պետք նախապատվութիւն տալ, քանի որ յուրաքանչյուր բարբառ ունի իրեն բնորոշ գեղեցկութիւնն ու կատարելութիւնը, և յուրաքանչյուր բարբառակիրի համար բնորոշ է «իւր մայրական և տեղական բարբառը սիրել և ուրիշներէն վեր դնել» (Չբ): Կեզվաբանին բնորոշ նուրբ հոտառութեամբ նա համոզիչ կերպով փաստարկում է, որ պետք է հաշվի առնել նախընտրելի բարբառի երկու կարևոր հատկութիւն: Առաջին՝ որքանո՞վ է մոտ տվյալ բարբառը գրաբարին՝ ոչ միայն բառապաշարի, այլ նաև բառակազմութեան և շարադասութեան տեսանկյունից, և երկրորդ՝ պետք է նախապատվութիւնը տալ այն բարբառին կամ դեռևս կազմավորման փուլում գտնվող այն աշխարհաբարին, որով խոսողները մեծամասնութիւն են կազմում մյուսների համեմատ: Ճիշտ է, այդ երկու առանձնահատկութիւնները միաժամանակ ունեցող աշխարհաբար¹⁹ դեռևս չկա, սակայն, ըստ

¹⁹ Շատ հաճախ Գ. Այվազյանը «աշխարհաբար» ասելով նկատի ունի ոչ թե բարբառային տարրեր ներառող մէկ լեզու (այսպէս օր. ժԹ. դարի նկատմամբ աշխարհաբարը), այլ

հեղինակի՝ արդեն իսկ ուրվագծվում են այն հիմնական բարբառները, որոնք հետագայում դիմացան ժամանակի փորձությունը՝ դառնալով արևելահայերենի և արևմտահայերենի կարևոր հենք-բարբառները. «Ճշմարիտ է, որ եթէ վերիվերոյ նայիմք, այս երկու յատկութիւններն ալ հաւասարապէս ու լիովին ունեցող աշխարհաբառ մը չկայ դեռ մեր ազգին մէջ. բայց աւելի ուշադրութեամբ դիտողը կտեսնէ, որ երկու մայր բարբառներ ունիմք՝ ուրիշ մանր տեղական կամ գաւառական բարբառներէն շատ աւելի իրաւունք ունեցող մրցելու. և սոքա են **Արարատեանը՝ Արևելեան բարբառներուն մէջ, և Պօլսականը՝ Արևմտեաններուն մէջ**» (Չբ):

Հետաքրքիր է, որ այս երկուսից Գ. Այվազյանը նախապատվությունը տալիս է Պոլսի բարբառին, նշելով, որ շնայած Արարատյան բարբառն ավելի մոտ է մեր մայր լեզվին՝ գրաբարին, այնուամենայնիվ, Պոլսի բարբառով խոսողները ավելի մեծ թիվ են կազմում, ըստ այդմ էլ՝ վերջինս պետք է դառնա աշխարհաբարի մշակման հենքը: Ըստ նրա՝ Պոլսի բարբառը պետք է հղկվեր, աստիճանաբար շտկեր իր թերությունները՝ օգտվելով հիմնականում գրաբարից, բարբառներից անհրաժեշտ բառեր և կապակցություններ ևս որդեգրելով. «Եւ ահա այն ժամանակը կարելի է յուսալ, որ ունենամք հասարակաց հաճոյական աշխարհաբառ՝ պարզ և բաւական զարդարուն լեզու» (էջ 2բ): Հեղինակը բազմաթիվ մեջբերումներ է անում նաև Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունից՝ բարձր գնահատելով վերջինիս ներդրումը աշխարհաբարի զարգացման գործում²⁰:

Գ. Այվազյանը մտավախություն է հայտնում՝ արդյո՞ք ժամանակ անց արդեն ձևավորված և կանոնավոր լեզու դարձած աշխարհաբարը չի նսեմացնի գրաբարի հարգն ու գործածությունը: Գրաբարի առաջացրած դժուարությունները փաստելիս, նա, սակայն, անհրաժեշտ է համարում աշխարհաբարի մշակումն ու տարածումը՝ նշելով, որ օրհասական է վերջինիս կանոնավորելու հարցը՝ թեկուզև որոշ թերություններով: Լեզվաբանին բնորոշ հմտությամբ նա հասկանում է, որ լեզուն կենդանի օրգանիզմ լինելով՝ չի կարող միշտ տեղավորվել բոլոր այն կաղապարների մէջ, որ առաջարկում են այս կամ այն քերականները, և հնարավոր է, որ սովյալ ժամանակին ճիշտ թվացող որոշ քերականական ձևեր կամ բառապաշարի որոշակի միավորներ չդիմանան ժամանակի փորձությանը և դուրս մղվեն կանո-

առանձին բարբառների վերջնական դրույթունը (յուրաքանչյուր բարբառի ժժ. դարում առկա վիճակը):

²⁰ Ձեռագրի ստորին լուսանցներում բազմաթիվ ծանոթագրություններ և մեջբերումներ կան Ա. Այտընյանի վերոնշյալ աշխատությունից, տես ՍՄ 2878, 2բ, 3ա, 3բ և այլն:

նավոր լեզվի գործառույթից, ուստի չի բացառում թեկուզև իր առաջարկած տարբերակների ոչ ճշգրիտ լինելը: Այս ամենին զուգահեռ՝ Գ. Այվազյանը նշում է, որ չպետք է որդեգրել նաև հակառակ երևույթը՝ թողնել լեզվի զարգացումը միայն ժամանակին, որի արդյունքում «լեզուի մը անկարգ և անկանոն ընթացքը մեծամեծ վնասներ կրնայ ունենալ, որոց առաջին և գլխաւորն է անսանձ վայրենութիւն կամ վայրենի ազատութիւն» (3բ):

Հաշվի առնելով վերը նշված բոլոր խնդիրները՝ առկա աշխարհաբարը «առավել ճկուն և զարդարուն» լեզու դարձնելու համար Գ. Այվազյանն առաջարկում է ստեղծել «դիւրիմաց» քերականություններ և «կոկիկ» բառարաններ, ուստի և որոշում է գրել այս աշխատությունը: Գ. Այվազյանը որպես աշխարհաբարին նվիրված համակողմանի գործ՝ կրկին վկայակոչում է Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունը՝ որպես առավել ուսումնական ոճով և աշխարհաբարի ընդարձակ քննությամբ գիրք. «Տարակոչս չկայ, որ այս գրուածքը աշխարհաբարի վրայ մինչև ցայժմ ելած գրքերուն ամէնէն աւելի ճոխն ու ճշգրտախօսը կրնայ համարուիլ, և մեր լեզուին վրայ ընդհանուր և մասնաւոր շատ գիտելիք ու տեղեկութիւններ կբովանդակէ» (4ա), և այն գերադասելով օրեցօր հրատարակվող աշխարհաբար աշխատություններից՝ Գ. Այվազյանը հաջորդ մի քանի էջ հատկացնում է այդ աշխատության մանրամասն քննությանը²¹:

²¹ Գ. Այվազյանը, սակայն, իր վերլուծություններում տեղ-տեղ վրիպում է, նշելով իր կարծիքով մի քանի թերություն այս աշխատության լեզվի հետ կապված: Ըստ նրա Ա. Այտընյանի որդեգրած ոճը առավել եվրոպական կամ գերմանական է և դժվարընկալելի է ոչ միայն գրաբար իմացողների, այլև աշխարհաբարին չափավոր տիրապետողների համար: Նա քյուրիմացաբար մտավախություն է հայտնում, որ ընթերցողը «փոխանակ մաքուր բնական և պարզ աշխարհաբար հայերէն մը սովորելու՝ կրնայ գիտցածն ալ մոռնալ, և նորելուկ ֆուսկարանություն մը սովորելու՝ հայկական մտքէ բոլորովին օտար և հեռու գաղափարներով (ՄՄ 2878, 4ա)», և բերում է բազմաթիվ մեջբերումներ վերոնշյալ աշխատությունից՝ գրի համապատասխան էջերի հղումներով՝ անհասկանալի համարելով բառապաշարի որոշակի շեղանք և ֆերականական կաղապարներ, որոնց մեծ մասը, սակայն, այսօր մեր հայերենի բաղկացուցիչ և անփակտելի մասն են: Նա Ա. Այտընյանի այս աշխատությունը համարում է բավական խրթին, որն, իր կարծիքով, կխոչընդոտի աշխարհաբարի արագ տարածմանը՝ նշելով, որ լեզվի ընկալելի լինելու առումով այն հավասարվում է Գ. Նարեկացու «Մատանն ողբերգութեան» պոեմի (Նարեկի դեպքում՝ նույնիսկ անցնում) և Դավիթ Անհաղթի «Պերիարմենիաս» աշխատության լեզվին: Աշխարհաբարին վերաբերող բազմաթիվ կարևոր դիտարկումներ ընդգրկող այսպիսի «խրթնախօս» ֆերականությունը Գ. Այվազյանը ներկայացնում է հետևյալ համեմատությամբ՝ «...Այտընեան Հօր ֆերականութիւնը կարելի է համեմատել այնպիսի հարուստ մթերանոցի՝ յորում հին և նոր ապրանքները բազմաթիւ, բայց այնչափ խառն ի խառն կուտակութեամբ դիզուած են, որ նոյն իսկ հեղինակը կամ տէրը դժուարաւ պիտի գտնէ մէջը իւր ուզածը» և որ թող ընթերցողը փորձի

Գ. Այվազյանը հանգամանալի բացատրում է նաև վերնագրի ընտրությունը՝ «Բառազննութիւն...», քանի որ իր նպատակը եղել է ոչ թե աշխարհաբարի ամբողջ բառապաշարի վերլուծությունն ու քննությունը, այլ միմիայն այն բառերի ու մասնիկների ծագումը, ուղղագրությունը և այլն, որոնք առավել գործածական են Պոլսի բարբառում: Հիշատակելով իր ժամանակակից որոշ բառարաններ²² նա նշում է, որ իր նպատակը ոչ թե աշխարհաբար լեզվի ամբողջական բառարան կազմելն է, ինչպես արել են վերոնշյալ բառարանների հեղինակները, այլ ընդամենն առավել գործածական բառերի քննություն կատարելը, իսկ վերջիններին բառարանների առիթով էլ նկատում, որ այդ աշխատությունները նույնպես չեն ընդգրկում աշխարհաբարի բառապաշարի ամբողջական շերտը և հեռու են լիակատար բառարաններ կոչվելուց²³:

Ինչ վերաբերում է ձեռագրի մեջ ընդգրկված բառապաշարային շերտի աղբյուրներին, Գ. Այվազյանն ընդարձակ մեջբերումներով վկայակոչում է Ա. Այտընյանի աշխատությունը՝ այդ գործի առիթով անուղղակիորեն անելով բազմաթիվ վերլուծություններ: Նաև որպես աշխարհաբարի բառապաշարի օժանդակ հենք՝ թվարկում է երեք լրացուցիչ աղբյուր՝ 1. Կոստանդնուպոլսում հրատարակվող լրագրերը, այնտեղ և Զմյուռնիայում տպված նորանոր թարգմանությունները, 2. Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան վանքերում տպված աշխարհաբար գրքերն ու լրագրերը, 3. Մոսկվայում և Թիֆլիսում հրատարակված աշխատությունները: Դրանցից կարելի էր բազմաթիվ աշխարհաբար բառեր, կաղապարներ և վկայություններ քաղել, բայց այդ ժամանակատար և տքնաջան գործը թողնելով հետա-

գտնել «անոր մէջ զատ և որոշ կերպով՝ զբաբառ լեզուին և աշխարհաբարոին կանոնները, աշխարհաբարոին ալ ընտելին ու խտտելին (էջ 5բ)»:

²² Մատնանշում է Մխիթար արքայի աշակերտ Հ. Մկրտիչ Անանյանի «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն» առանց հեղինակի անվան տպված բառարանը (Վենետիկ, 1769), որն ավելի հարստացված հրատարակել են 1869 թ. Վենետիկի Մխիթարյան հայրերը. էջմիածնի ժամանակի մատենադարանապետ Ս. Ամատունին (ձեռագրում բազմաթիվ սրբագրումներ և հավելումներ կան վերջինիս ձեռով) 1869 թ. վերահրատարակված այդ բառարանը իրավացիորեն վերագրում է էդ. Հյուսվուզյանին (ՄՄ 2878, 5բ). տե՛ս Եդ. Հիւսվիւզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ յաւելուածովք ոճոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց, Վենետիկ, 1869:

²³ Ըստ Գ. Այվազյանի՝ ամբողջական կամ «լիակատար» բառարանը պետք է ներառի. 1. Գրաբարի բառապաշարի գրեթե ամբողջ շերտը, 2. Աշխարհաբարի տարբերակների մեջ լայնորեն կիրառություն ունեցող բառերը, 3. «Գավառական» բարբառների գտնե հիմնական բառապաշարը, 4. Փոխառությունները (մասնավորապես նշում է տանկերենից, պարսկերենից և եվրոպական լեզուներից մեր բառապաշարն անցած բառերը): Գ. Այվազյանը հույս է հայտնում, որ հետագայում այդպիսի գործ ձեռնարկողը օգտվի նաև իր այս աշխատությունից և «դիւրացընէ աշխարհաբառ լեզուի օրինատար փերականութիւն մը շինողին աշխատութիւնը» (ՄՄ 2878, 6ա):

գա սերունդներին՝ նա սահմանափակվում է իր ժամանակաշրջանի՝ հիմնականում բանավոր խոսքում առավել գործածական բառերի քննությունը: Հեղինակը նշում է, որ իր նպատակը լիակատար բառարան կազմելը չէ, այլ ժամանակակից հեղինակներին ուղղորդելն է՝ ընտրելու աշխարհաբարի բառապաշարի նախընտրելի տարբերակները:

Ի տարբերություն այլ բառարանների, որտեղ հիմնականում բառահոգվածը կառուցված է բառ-բառ կաղապարով՝ Գ. Այվազյանի այս աշխատության մեջ գործում է միանգամայն այլ կաղապար՝ բառ-բառազննություն: Այստեղ բառահոգվածի բացատրելիք բառի համար նախ տրվում է համապատասխան հոմանիշ հայերեն բառը կամ աշխարհիկ լեզվով բառիմաստի նկարագրությունը, այնուհետև տաճկերեն (թուրքերեն) տարբերակները (շատ հաճախ՝ նաև եվրոպական լեզուների համարժեքները)²⁴, անհրաժեշտության դեպքում արվում է նաև բառակազմական-ստուգաբանական վերլուծություն՝ հաճախ մատնանշելով նաև այդ բառը կիրառող աշխարհագրական տեղանքը: Գ. Այվազյանն արտահայտում է նաև իր կարծիքն այս կամ այն բառին նախապատվություն տալու (կամ չտալու) հետ կապված՝ որպես կանոնավոր աշխարհաբարին անհրաժեշտ բառապաշարային միավոր: Բերենք մի քանի բառահոգվածի նմուշ՝

1. «**Ազգայնութիւն** – Վերինին (նկատի ունի նախորդ բառահոգվածը) նման ֆոնակաբանություն, գաղղ.՝ *nationalité*, որ է Ազգային յատկություն, շատ շատ՝ **Ազգություն** (9բ)»:
2. «**Աղա** – Պարոն բառին պէս այս ևս օտարագգի բառ է. թուրքաց լեզուէն առնուած, յորում առաջին նշանակութիւնն է **մեծ եղբայր**, և երկրորդը՝ **տէր**, իշխան: Յանկայի էր ուրիշ նման բառերու հետ զսա ևս հանել արքսորել մեր աշխարհաբառէն, տեղը ազգային **տէր** բառը գործածելով, բայց կերևի, որ դեռ կանուխ է, մանաւանդ անոր համար, որ **տէրը** եկեղեցականաց սեպհական տիտղոս համարուած է (11ա)»:
3. «**Ամէն** – Շատ տեղ այս բառը կհնչուի **ամմէն**, որ սխալ է: Ոմանք կգրեն **Ամեն**, իբրև **Ամենայն** բառէն կրճատուած, բայց յայտնի է, որ գրոց **ամէն** բառն է սա անփոփոխ, ուստի և էով գրելի՝ քան թէ եչով (11բ)»:
4. «**Գրող, գրող**²⁵ – Մահ: Սովորաբար անէծքի ձևերու մէջ կբանի: Շատը **կրօղ** կհնչեն և կհասկընան իբր **Առնող-տանող** (19ա)»:

²⁴ 15-ից ավելի լեզուների իմացությունը թույլ է տալիս Գ. Այվազյանին հեշտությամբ կատարել նաև այլ լեզուների հետ համեմատական ֆննություն:

²⁵ «Նրևակայական չար ոգի կամ չար հրեշտակ». տե՛ս **Ստ. Մալխասյան**, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, էջ 478:

5. «Ասել – Փոքր Ասիոյ աշխարհաբառին մէջ եղած է ըսել, ըսի, ըսաւ, ըսէ, ըսէք, և այլն, բայց ընդհանրապէս ամէն Հայաստանցիք, ինչպէս նաև Լեհաստանի և Խորիմու հայերը կհնչեն հին ու բնական ձևովը՝ **ասել, ասի կամ ասցի կամ ասացի, ասաւ կամ ասաց, ասա, ասէք կամ ասացէք, և այլն: Թիֆլիզեցիք կօսիմ, կօսիս, կօսէ ձևը կբանեցընեն, որ նոյնպէս կասեմ, կասես, կասէ ձևէն առնուած է (15ա)»:**
6. «Բարև – Գրոց ողջոյն բառին տեղը բռնած է շատ ժամանակէ ի վեր, տճ. սէլամ, և ձևացած է նոյնպէս գրոց լեզուին բարեաւ բառէն, որոյ մէկ կերպն ալ եղած է աշխարհաբառին մէջ բարով (16բ)»:
7. «Գամ – Գեղեցիկ աշխարհաբառ է իբրև բևեռ. տճ.՝ էնքսէր, Հայաստանի մէջ տեղ տեղ Մերս կասեն, որ Պարսից ու Թուրքաց միխ, մըխ բառն է (18ա)»:
8. «Գայլ – Եւ ոչ գալ կամ գէլ, կամ գիլ (18ա)»:
9. «Ինչու, ընչու – Ինչու համար կամ ինչի համար խօսքին կարճառօտն է, վաղուց աշխարհաբառին մէջ գործածուած: Հայաստանի մէջ աւելի կբանեցընեն ինչի՛ կամ ընչի՛. և տեղ-տեղ այս այս անճոռնի հարցականը՝ խի՛, որ իբր թէ գրաբառին Զի՛ խօսքն է (32բ)»:
10. «Խօստում, խօստանալ – Տգիտական սխալ գրուածք է փոխանակ գրելու խոստում, խոստանալ, թէպէտև արմատը խօսք բառը կերևի, բայց իրօք բուն արմատն է խոստ, որոյ նման է և Պարսից խիւսթ և խուսթու բառը (41ա)»:
11. «Մթնշաղ – Նոյնպէս ընտիր բառ՝ իբրև Աղօտ, կէս մութ կէս լոյս (54բ)»:
 Հատկանշական է նաև այն, որ մինչ այբուբենի յուրաքանչյուր տառով սկսվող բառերի քննությունը՝ Գ. Այվազյանը բավականին մանրամասն ներկայացնում է նաև նույն տառը՝ առանձին: Գրեթե յուրաքանչյուր տառ ներկայացված է երկու մասով. նախ՝ նրա հնչյունաբանական վերլուծությունը և գործածության հաճախականությունը հայերենում, ապա՝ նոր միայն շարադրված է այդ տառով սկսվող բառերի քննությունը: Որոշ բառահոդվածներ առանձնանում են նաև Արարատյան և Պոլսի բարբառների համեմատական քննությամբ. օրինակ, Ա տառի հնչյունաբանական վերլուծությունից հետո հեղինակը մատնանշում է նրա գործածության բարձր հաճախականությունը: Նա փաստում է, որ Արարատյան բարբառում այն երբեմն կիրառվում է նույնիսկ է օժանդակ բայի փոխարեն՝ «...ոմանց աշխարհաբառը չափազանց խճողուած է այս ա տառիս սաստիկ բաց արտասանութեամբը. այնպէս որ ոչ միայն գրեթէ ամէն բառի մէջ անկորուստ կպահեն... այլև երբեմն է տառին տեղը ա կբանեցընեն, որով բոլոր նոցա արտաբերու-

թիւնը կթանձրանայ ու կտգեղանայ» (9ա)՝ որպէս օրինակ բերելով «Հյուսիսաբնակ հայոց» (այսինքն՝ Վրաստանի, Ղարաբաղի, Երևանի, Հին Ջուղայի և այլն) արտասանութիւնը, ովքեր «լաւ է, դժուար է, խելօք է» ասելու փոխարեն լայնորեն կիրառում են «լաւ ա, դժուար ա, խելօք ա, գնում ա, ասում ա» ոչ նախընտրելի ձևերը:

Հետաքրքիր է **աշխարհաբար, գրաբար** եզրերի վերաբերմամբ Գ. Այվազյանի դիրքորոշումը. նա ներկայացնում է **աշխարհաբառ/աշխարհաբար, գրաբառ/գրաբար** տարբերակները և նախապատվութիւնը տալիս ու-ով տարբերակներին՝ միանալով այն կարծիքին, որ դրանք առաջացել են **աշխարհ և բարբառ** կամ **գիրք և բարբառ** ձևերից, իսկ ու-ով ձևերը՝ իբրև մակբայ համարում «ուսմկօրէնին» ոչ հարիր և բնական (14ա):

Թուրք/Թուրքաստան բառերի առիթով Գ. Այվազյանն ընդարձակ բառահոգեւածով ներկայացնում է դրանց տարածված լինելը: Նա նշում է, որ դրանցով եվրոպացիները, ինչպէս նաև մենք, անվանում ենք օսմանցիներին կամ ընդհանրապէս բոլոր մահմեդականներին, և ցույց է տալիս, որ հաճախ այդ անվանումը տարածվում է նաև պարսիկների, արաբների, քրդերի, թաթարների և մահմեդական այլ ցեղերի վրա: «Ֆռանկաբանութիւն» և ոչ ախորժելի է համարում ֆրանսերենից փոխառված «Թիւրքիա» տարբերակը, որն, ըստ նրա, ֆրանսերենի խեղաթյուրված տարբերակն է՝ «...եթէ գաղղիարենի ճիշտ նմանցընել ուզենէր, պէտք էր ասել **Թիւրքի**, եթէ իտալերենին, **Թուրքիա՛**. եթէ գերմաներենին, **Թիրքայ**. եթէ անգլիարենին, **Թը՛րքի**. եթէ ռուսերենին, **Թո՛ւրցիա**, և այլն», և նախապատվութիւնը տալիս է հին տարբերակներին՝ **Թուրք և Թուրքաստան, Տաճիկ և Տաճկաստան** կամ **Օսմացի և Օսմանեան երկիր** կամ տէրութիւն (30բ):

Գ. Այվազյանը **ժանիք** բառը կրկին աշխարհաբարին հարիր՝ «ընտիր բառ» է բնորոշում, միայն թե «խիստ, խոժոռ նայվածքի» իմաստով, տաճկերենի՝ «չէ՛հրէ, չըրայ, սուրաթ» բառերին համարժեք, մինչդեռ այժմ **ժանիք** ասելով հասկանում ենք կա՛մ մարդու ատամ, կա՛մ կենդանիների բերանից դուրս ցցված՝ հարձակման և պաշտպանութիւն համար ծառայող խոշոր սրածայր ատամ, և միայն գավառական բառարաններում է պահպանվել այս բառի՝ խոժոռ, մռայլ դեմք իմաստը (31ա)²⁶:

Գ. Այվազյանը նշում է գույների և որոշ այլ ածականների գերադրական աստիճանն արտահայտող գրեթե բոլոր տարբերակները՝ տաճկերեն գուգահեռներով,

²⁶ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 391:

այսպէս.

կաս-կարմիր, տճ.՝ գըփ-գըրմըզը

կաս-կապուտ, տճ.՝ մօս-մօր

դեփ-դեղին, տճ.՝ սափ-սարը

նիփ-նեմակ, տճ.՝ պէմ-պէյազ

կափ-կանաչ, տճ.՝ եէմ-եէշիլ

սիփ-սև, տճ.՝ սիմ-սիյահ, և այլն (44ա):

Համար բառի փոխարեն Գ. Այվազյանը հորդորում է կիրառել **վասն** գրաբար տարբերակը, խոտելի համարելով թիֆլիզեցիների **համա**-ն և Հայաստանում կիրառվող **հմա**, **հմար** ձևերը (47բ): Ոչ նախընտրելի ձևերի շարքին է դասում նաև պոլսեցիների և Հայաստանի բնակիչների կիրառած **հայեվար** բառը՝ առաջարկելով գործածել **հայերէն** տարբերակը: Նա նշում է վերջինիս կապը վարք բառի հետ (հայոց վարքով) և բերում համաբանութեամբ առաջացած այլ տարբերակները՝ **տանկեվար**, **ռուսեվար**, **գաղղիէվար**՝ փոխարենն առաջարկելով գործածել **-արէն** և **-երէն** վերջածանցով կազմությունները՝ **հայերէն**, **գաղղիարէն**, **յունարէն**, **լատիներէն**, **եբրայեցեբէն** և այլն (48ա):

Հետաքրքիր է ժամանակակից հայերենում լայնորեն կիրառվող **հանդիսութիւն** տարբերակի՝ Գ. Այվազյանի մեկնաբանությունը. համարելով «տգեղ բառ»՝ նա ավելորդ է համարում **-ութիւն** ածանցը՝ առաջարկելով գործածել **հանդէս** բառը (48ա):

Գ. Այվազյանը **հանելուկ** բառի ուղղագրության առիթով ուշագրավ նկատառում է անում. քանի որ, ըստ նրա, դա հանելիք, նշանակությունը գտնելիք խոսքն է՝ առաջարկում է **հանելուք** ձևը (48ա): Նա լայնորեն կիրառվող **համբայ** բառի փոխարեն հորդորում է գործածել **հանապարհ**՝ մայր բառը (տալիս է բառի ծագման ուղին՝ ճանապարհ > ճանպարհ > ճանփայ > ճամբայ), իսկ **ճամբել**, **ճամբորդ**, **ճամբորդութիւն** բառերի փոխարեն՝ **ճանապարհ դնել կամ ձգել**, **ճանապարհորդ**, **ճանապարհորդութիւն**. «և ի՞նչ վնաս» բառակապակցությամբ ավարտում բառահոգվածը (52ա):

Մարդավար, **ֆաղափար** բառերի առիթով հեղինակը նշում է, որ դրանք միանգամայն ճիշտ տարբերակներ են և սխալ ձևեր է համարում **մարդավարի**, **ֆաղափարի** ձևերը (53բ), մինչդեռ վերջիններս են մեր բառապաշարի լիիրավ անդամներն այսօր:

Գ. Այվազյանը տալիս է **մղտեսի**, **մահտեսի** բառերի ստուգաբանությունը. մահտեսի բառի արմատը մահը չէ, ինչպէս տարածված է, այլ «արաբացուց գուտս բառէն է, որ է՝ Երուսաղէմ. անկից ածանց է՝ մուգատտէսի, իբր Երուսաղէ-

մացի. տճ.՝ հաճի. ուստի ի զուր է ոմանց ստուգաբանությունն որ իբր թէ մահ-տեսի, Քրիստոսի գերեզմանը տեսի») (55ա):

Գ. Այվազյանը նախընտրելի բառեր է համարում նաև **հրահրել** (51ա), **մրափ** (իբրև «նիրհել, քնել», 55բ), **չարփաշ** (իբրև «ժուժկալ, նեղության սովոր», 64ա), **քաղհան** (76բ), իսկ ոչ նախընտրելի՝ **ճանկապուռճ** («զանգակատուն») իմաստով, տճ.՝ «չանկ պուրճու», 52ա), **նիստ** (համարելով «անշնորհք թարգմանություն») իտալերեն *seduta* և ֆրանսերեն *séance* բառերից՝ առաջարկում է «գումարումն, հաւաքումն» տարբերակները. 57բ), **նկատմամբ** (համարելով «անպիտան և օտարախորթ թարգմանություն») ֆրանսերեն *par rapport à, relativement à* բառերից՝ առաջարկում է «այս խնդրոյս նկատմամբ» ասելու փոխարեն գործածել «այս խնդրոյս համար» կամ «այս մասին» տարբերակները. 57բ): **Պաշտօնապէս** (համարելով «անպէտ թարգմանություն») ֆրանսերեն *officiellement* բառից՝ առաջարկում է գործածել «պաշտօնական կերպով, ի պաշտօնէ» տարբերակները. 64բ): **Վերջապէս՝** հեղինակը նշում է, որ այս մակբայը չկա գրաբարում և նորահնար թարգմանություն է իտալերենի *finalmente* և ֆրանսերենի *enfin* բառերից, առաջարկում գրաբար բազմաթիվ նախընտրելի տարբերակներ՝ «ի վերջէ, ի վերջոյ, ի վախճան բանիցս, յաւարտ ամենայնի, հուսկ ուրեմն», սակայն հաշվի առնելով, որ բառն արդեն մտել է գործածություն մեջ, հույս է հայտնում, որ գոնե այնքան շտաբածվի, որքան օր.՝ ֆրանսերենի *enfin* և ռուսերենի **наконец** բառերը, որոնք «որ շատ անգամ շատզրուց մարդիկ աչք խաբելու համար կբանեցընեն՝ քան թէ իրենց շատախօսությունը վերջացընելու. վասն զի **վերջապէս** բառը երբեմն երբեմն կրկնելով՝ իրենց ձանձրալի խօսակցութեան թելը որքան որ կրնան կերկընցընեն» . 71ա) և այլ բառեր:

Որոշ բառերի դեպքում էլ հեղինակը նշում է գրություն նախընտրելի տարբերակը՝ առաջարկելով գերծ մնալ տարածված սխալ տարբերակներից. այսպես՝ «**Յիսուն** - և ոչ **Յիսսուն**, **Խոցուն**, **Իսսուն**» (56ա), **շնորք** բառի առիթով նախընտրելի է համարում **շնորհք** ձևը՝ ի հակադրություն ոմանց, ովքեր իբր գրաբար բառերի «կարծեցեալ ծանրությունները» թեթևացնելու նպատակով կրճատում են որոշ տառեր (59բ), **ցորեկ** բառի փոխարեն՝ **ցերեկ** ձևը (74բ), **փաղբըցի** բառի փոխարեն՝ **փաղափացի** (76բ), **ֆեզի** դերանվան փոխարեն **ֆեզ** տարբերակը (77ա) և այլն:

Վենետիկ տեղանունը ստուգաբանելիս նշում է, որ այն հոլանդերենից կամ գերմաներենից է անցել տաճկերենին, որտեղից էլ հայերենին՝ **Վենետիկ**, կամ ինչպես իրենից հիսուն տարի առաջ տարածված ուղղագրությամբ՝ **Վենէտիկ**, բե-

րում այլ լեզուներում առկա տարբերակները. իտալերեն՝ **Վէնէջիա**, ֆրանսերեն (գաղղիերեն)՝ **Վրնիզ**, որտեղից էլ հիմնականում չափածոյում երբեմն կիրառվող **Վրնէժ** ձևը, իսկ **Վենէժ** տարբերակը համարում է միանգամայն սխալ ձև (70ա):

Անհիմն փոխառություններին անդրադառնալիս Գ. Այվազյանը հաճախ գործածում է ֆռանկաբանություն հասկացությունը՝ վերջում անդրադառնալով նաև այդ բառին. «**Ֆռանկաբանութիւն** – Բառազննութեանս վերջին բառ թող համարուի այս մեր հնարածը, որով կուզեմք հասկըցընել այն անհամ և անշնորհք աշխարհաբառի ոճն, որ մտած է մեր ազգին մէջ քանի մը գաղղիարէնէ, ևս և անգղիարէնէ թարգմանուած գրոց և լրագրաց ոճէն» (78բ):

Ինչպես տեսնում ենք, Գ. Այվազյանը, հավատարիմ մնալով իր սկզբունքին, կատարում է միայն իր ժամանակի գործող աշխարհաբար շերտի բառազննություն: Ջնայած նրա նպատակը ընթերցողին աշխարհաբարի ճիշտ բառընտրության հարցում ուղղորդելն է՝ այնուամենայնիվ, նա ներառել է այդ ընթացքում եղած բառապաշարի առավել կիրառվող գրեթե բոլոր բառերը, անկախ նրանից, թե տվյալ բառը որքանով է համապատասխան գրավոր աշխարհաբարի մեջ մտնելու և հետագայում նրա անքակտելի մաս կազմելու իր նախասիրությանը, և միայն վերլուծություններով է ընթերցողներին հորդորում նախապատվությունը տալ կամ խուսափել այս կամ այն բառի գործածությունից: Ուստի ՄՄ 2878 ձեռագիրը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի աշխարհաբարի բառապաշարի գործող շերտի գրեթե ամբողջական պատկերը (իհարկե՝ տարածքային սահմանափակմամբ): Մյուս կողմից, Գ. Այվազյանը բառերի միայն մի մասին է նախապատվություն տալիս՝ որպես զարգացող աշխարհաբարի նախընտրելի միավորների, իսկ մյուսներից, կրկին մանրամասն վերլուծություններով, բացատրելով դրանց ծագումը, այս կամ այն լեզվից անհիմն պատճենումը, հորդորում է խուսափել՝ առաջարկելով իր տարբերակները: Սրանց մի մասը, սակայն, հետագայում չդիմանալով ժամանակի փորձությանը, դուրս մղվեցին բառապաշարից և, ընդհակառակը, Գ. Այվազյանի արհեստական և ոչ նախընտրելի համարած բազմաթիվ բառեր լայն կիրառություն ստացան ոչ միայն իր ժամանակի գործող աշխարհաբար բառապաշարում, այլև արդի արևելահայերենում և արևմտահայերենում:

Որոշ ստուգաբանական վերլուծություններով, բառերի՝ այս կամ այն լեզվում համարժեքների մատնանշումով՝ Գ. Այվազյանի աշխատանքը հավասարվում է գրեթե համակողմանի քննության: Բազմաթիվ համեմատությունները գրաբարի և

իր ժամանակակից բարբառների հետ հարստացնում են բառահոգվածները, ինչպես նաև օգնում ընթերցողին բառընտրության հարցում՝ ոչ թե ուղղակիորեն, որովհետև այդպես է ընդունված, այլ գիտակցաբար վերջինս կարող էր նախապատվությունը տալ հայերեն ընդունելի համարժեքին:

Ամփոփենք. Գ. Այվազյանի խնդրո առարկա աշխատությունը ժժ. դարի երկրորդ կեսի աշխարհաբարի, ինչպես նաև ուսյալ հայագետի լեզվական պատկերացումների և նախընտրությունների մի բացառիկ արտահայտություն է:

HASMIK IRITSYAN

**THE MANUSCRIPT “WORD-STUDY OF THE SECULAR LANGUAGE”
GABRIEL AYVAZYAN AS WORK ENHANCING THE SPREAD OF MODERN
ARMENIAN (ASHKHARHABAR)**

Keywords: Congregation of Mkhitarists, Bazmavep, manuscript, dictionary, Modern Armenian language, Old Armenian language.

G. Ayvazyan’s handwritten work “Word-study of the secular Language” (Ms M 2878) gives an idea of his role in the spread of *ashkharhabar* (the New Armenian language) and is an interesting sample of dictionary. Having grounded the development of the New Armenian by theoretical provisions in his earlier articles, in the work in question the author attempts to put the New Armenian of his day into use. G. Ayvazyan offers authors with a sort of handbook for Armenian vocabulary, in order to make their works accessible for wide circles.

The manuscript contains Ayvazyan’s interesting linguistic observations and characteristics, as well as his arguments in favour of giving preference to *Ashkharhabar*. Besides it provides information on a specific sample of the mid 19th century Armenian, which makes our knowledge of the Armenian vocabulary of that period more accurate.

Асмик Ирицян

**РУКОПИСЬ ГАБРИЭЛА АЙВАЗЯНА “АНАЛИЗ СЛОВ
СВЕТСКОГО ЯЗЫКА” КАК ТРУД, СПОСОБСТВУЮЩИЙ
РАСПРОСТРАНЕНИЮ АШХАРАБАРА**

Ключевые слова: Конгрегация Мхитаристов, “Базмавел”, рукопись, современный армянский, древнеармянский.

Рукописный труд Габриэла Айвазяна (Айвазовского) “Анализ слов светского языка” (рукопись № 2878 из собрания Матенадарана им. М. Маштоца) дает представление о роли Г. Айвазяна в распространении ашхарабара (новоармянского языка), являясь интересным образцом словаря. Обосновав в ранее опубликованных статьях развитие ашхарабара теоретическими положениями, в рассматриваемом труде автор пытается ввести новоармянский язык в обиход. Г. Айвазян предлагает авторам как бы руководство по лексике армянского языка, с целью сделать их тексты доступными широкой общественности.

Рукопись содержит интересные языковые наблюдения и характеристики Г. Айвазяна и аргументы в пользу предпочтения ашхарабару. Кроме того, она знакомит нас с конкретным образцом ашхарабара середины XIX века, уточняя наши представления о словарном запасе новоармянского языка этого периода.